ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՄ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱ-ԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով «Քաղաքացի Աշոտ Մանուկյանի եւ քաղաքացի Արամ Բարեղամյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով լրացուցիչ նյութերի ուսումնասիրման եւ գործի հանգամանքների համակողմանի բացահայտման անհրաժեշտությունից, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Նշված գործի դատաքննությունը հետաձգել եւ սկսել 2013 թվականի մայիսի 31-ին, ժամը 10.00-ին, միաժամանակ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի» 68-րդ հոդվածի 6-րդ մասը, գործի դատաքննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով:

2. ՀՀ դատական դեպարտամենտից պահանջել՝ մեկշաբաթյա ժամկետում սահմանադրական դատարան ներկայացնել 2012 եւ 2013 թվականների ընթացքում ՀՀ դատարանների կողմից նոր հանգամանքների հիմքով ներկայացված հայցադիմումների հիման վրա ընդունված դատական ակտերը:

3. Այս կապակցությամբ վերանայել ՀՀ սահմանադրական դատարանի՝ 13.11.2012թ. ՍԴԱՈ-78 եւ 26.03.2013թ. ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշումները եւ ուժը կորցրած ճանաչել որոշումների համապատասխանաբար 3-րդ եւ 2-րդ կետերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

30 ապրիլի 2013 թվականի
ՍԴԱՈ -37